

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/113»**

ք. Երևան

«19» հունիսի 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն-բաժնետեր Գ. Գոյբուդաղյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2018-2020 թվականների համար նախատեսվող ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Երևան.Արևային համայնք» ծրագրի ֆինանսական հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 800000 (ութե հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (Համաձայնագրի) վճարման յուրաքանչյուր տարվա ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն մատուցված ծառայության գնի 0,05 (հրապարակված էին հարցերի 1-ին հարցի պատասխանում)

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՓՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
ք. Երևան,
Բանկային հաշիվը՝ 2050022339351001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00040569

Գ. Չթոյան



Գ. Գյուլբուդադյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79211150	Պետք է իրականացնի ԵՄ կողմից համաֆինանսավորվող Դրամաշնորհային պայմանագրի (պայմանագրի համար՝ ENPI 2017/393-505) շրջանակում «Երևան.Արևային համայնք» ծրագրի ծախսերի ստուգում, աուդիտ և հաշվետվությունների ներկայացում: Սույն ներգրավվածության առարկան միջանկյալ (յուրաքանչյուր 6 ամիս) և վերջնական (տարեկան) ֆինանսական հաշվետվություններն են՝ կապված 2018թ. մարտի 1-ից մինչև 2020թ. մարտի 1-ը ընկած ժամանակահատվածում «Երևան.Արևային համայնք» գործողության իրականացման	դրամ	4800000	-----	Արգիշտիի 1,	ծառայությունն կմատուցվի պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2020թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածը:

հետ:
Հաշվետվություններ
ընդ պետք է
ներկայացվեն
անգլերեն և
հայերեն
լեզուներով:
Ակնկալվում է, որ
Առողիտորը
միջանյալ
ֆինանսական
հաշվետվություններ
ընդ
կիրականացնի
ծախսերի
վերաբերյալ
առողիտ:
Առողիտորը պետք
է հաշվապահների
համար
իրականացնի
մեկօրյա ուսուցում՝
տրամադրելով
խտիրդատվություն
տարբեր ծախսերի
հետ կապված
օժանդակ
փաստաթղթերի
վերաբերյալ:
Այս տեխնիկական
առաջադրանքում
«Պայմանագրի
լիազոր մարմնին»
հիշատակելիս
նկատի ենք
ունենում
Եվրոպական
հանձնաժողովը,
որը Շահառուի
հետ ստորագրում
է
Դրամաշնորհային
պայմանագիրը և
տրամադրում
դրամաշնորհային
ֆինանսավորումը:
ԵՄ
համաֆինանսավո
րմամբ
իրականացվող
«Երևան. Արևային
համայնք» ծրագրի
ֆինանսական
հաշվեքննության
(առողիտի)
ծառայությունների

		առաջադրանքի հիման վրա կնքվելու է ծառայության մատուցման պայմանագիրը(հայերեն և անգլերեն [եզուներով]):					

Տեխնիկական առաջադրանքի նկարագրություն դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական աուդիտորի համար
Եվրոպական Միության արտաքին գործողություն

Կազմակերպությունը՝ Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անվանումը՝ «Երևան.Արևային համայնք» 393-505
Իրականացման վայրը՝ Քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)
Աշխատանքների տևողությունը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2020թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածը

1. Համառոտ ակնարկ

Երևանի քաղաքապետարանը ԵՄ աջակցությամբ իրագործում է «Երևան.Արևային համայնք» ծրագիրը, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.111-Ա որոշմամբ: Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2018-2020թթ. ընթացքում: Ծրագրային փաստաթուղթը հասանելի է Երևան քաղաքի պաշտոնական կայքում՝ www.yerevan.am:

Երևան քաղաքում բնակչության մեծամասնությունը՝ ավելի քան երկու երրորդը (շուրջ 720000 բնակիչ), ապրում է բազմաբնակարան շենքերում: Երևանում առկա է շուրջ 4900 բազմաբնակարան շենք, որից շուրջ 2300-ում առկա է վերելակ:

Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» համաձայն՝ բնակելի շենքերին բաժին է ընկնում քաղաքի բազային էներգասպառման կեսը: Ծրագրի նպատակն է բազմաբնակարան շենքերում նվազեցնել էներգետիկ սպառումը և դրա հետ փոխկապակցված ջերմոցային գազերի արտանետումները (ՋԳ)՝ էներգախնայողության միջոցառումների իրականացման և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման միջոցով:

Ծրագրի նպատակն է աջակցել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին (համատիրություններին) էներգասպառման կառավարման գործում՝ էներգաարդյունավետության միջոցառումների կիրառման և տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման միջոցով՝ ապահովելով բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների համար օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրությունը (շքամուտքերի, աստիճանավանդակների լուսավորություն, վերելակի էլեկտրաէներգիա, բակային լուսավորություն և այլն):

Արևային վահանակները նախատեսվում է տեղադրել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի տանիքներին (շուրջ 90 շենք): Այսպիսով, արևային վահանակների տեղադրումը շենքի տանիքներում շահավետ կլինի բոլորի համար: Ֆոտովոլտային կայանի արտադրած էներգիան ամբողջությամբ կծածկի շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների և բակային տարածքների էներգիայի սպառման պահանջարկը, իսկ ավելցուկը կվաճառվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Եկամուտները կկուտակվեն համապատասխան համատիրությունների էներգետիկ շրջանառու ֆոնդերում և կարող են օգտագործվել շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացման

են իրականացնում շենքերի պատշաճ սպասարկումը: Ծրագրի իրականացման արդյունքում առաջացած եկամուտը թույլ կտա համատիրություններին ֆինանսավորել շենքի էներգաարդյունավետության միջոցառումները և այլն:

2. Նշանակման նպատակը

Ստորև ներկայացվածը հանդիսանում է տեխնիկական առաջադրանք համաձայն որի՝ Երևանի քաղաքապետարանը («Համակարգող» տերմինը վերաբերում է Շահառուին, որը նույնացվում է Հիմնական պայմաններ փաստաթղթում՝ որպես Համակարգող) համաձայնում է ներգրավել Աուդիտոր, որը կիրականացնի ԵՄ կողմից համաֆինանսավորվող Դրամաշնորհային պայմանագրի (պայմանագրի համար՝ ENPI 2017/393-505) շրջանակում (այսուհետ՝ Դրամաշնորհային պայմանագիր) «Երևան.Արևային համայնք» ծրագրի ծախսերի ստուգում, աուդիտ և կներկայացնի հաշվետվություններ: Այս տեխնիկական առաջադրանքում «Պայմանագրի լիազոր մարմին» հիշատակելիս նկատի ենք ունենում Եվրոպական հանձնաժողովը, որը Շահառուի հետ ստորագրում է Դրամաշնորհային պայմանագիրը և տրամադրում դրամաշնորհային ֆինանսավորումը: Պայմանագրի լիազոր մարմինն այս պայմանագրի մաս չի կազմում:

3. Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

«Շահառու (ներ)» տերմինը համախմբում է բոլոր շահառուներին, այդպիսով՝ Գործողության համակարգողին: Այդդեպքում, եթե առկա է միայն մեկ շահառու, ապա «Շահառու (ներ)» և «Համակարգող» տերմինը կվերաբերի գործողության միակ շահառուին (տես ծանոթագրություն 1-ը) և, եթե կիրառելի է, առընթեր մարմնին (ներին):

- Համակարգողը պարտավոր է տրամադրել ֆինանսական հաշվետվություն, այն գործողության համար, որ ֆինանսավորվում է դրամաշնորհային պայմանագրով, համապատասխանում է Դրամաշնորհային պայմանագրի պայմաններին և դրույթներին, երաշխավորելու, որ սույն ֆինանսական հաշվետվությունը համապատասխանում է շահառուի հաշվապահական և ֆինանսական համակարգին, ինչպես նաև հիմնարար հաշիվներին և գրառումներին: Շահառուն պարտավոր է ներկայացնել պատշաճ և բավարար տեղեկատվություն, ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական բնույթի՝ որպես կից տեղեկություն ֆինանսական հաշվետվությանը:
- Համակարգողը ընդունում է, որ աուդիտորի կողմից սույն պարտականության համար պահանջվող ընթացակարգերը կատարելու ունակության արդյունավետությունը կախված է Շահառուից (ներից), և առընթեր մարմնից (ներից), տրամադրելով ամբողջական և ազատ մուտք անձնակազմին, հաշվապահական և ֆինանսական համակարգին, ինչպես նաև հիմնական հաշիվներին և գրառումներին:
- «Աուդիտորը» պատասխանատվություն է կրում SU-ում նշված համաձայնեցված ընթացակարգերի կատարման համար: «Աուդիտորը» աուդիտորական կազմակերպություն է, որը պայմանագիր է կնքել աուդիտորական գործողություն իրականացնելու և Շահառուին հայտնաբերված փաստերի վերաբերյալ հաշվետվություններ կայացնելու համար: «Աուդիտորը» կարող է վերաբերել ստուգում իրականացնող անձին կամ անձանց, ովքեր իրականացնում են ստուգումներ, սովորաբար, իրականացնող գործընկեր կամ աուդիտի թիմի այլ անդամներ: Իրականացնող գործընկերը աուդիտորական կազմակերպությունում այն գործընկերը կամ անձն է, ով պատասխանատու է ընկերության անունից իրականացվող աուդիտի կամ տրամադրվող հաշվետվության համար, և ով մասնագիտական, իրավական և կարգավորող մարմնից ունի համապատասխան լիազորություն:

Համաձայնելով սույն տեխնիկական նառաջադրանքի հետ, Աուդիտորը հաստատում է, որ համապատասխանում է հետևյալ պայմաններից առնվազն մեկին.

- Աուդիտորը և/ կամ ընկերությունը հանդիսանում է ազգային հաշվապահական կամ աուդիտորական մարմնի կամ հաստատության անդամ, որն իր հերթին հանդիսանում է Հաշվապահների Միջազգային Ֆեդերացիայի (ՀՄՖ) անդամ:
- Աուդիտորը և/ կամ ընկերությունը հանդիսանում է ազգային հաշվապահական հաշվառման կամ աուդիտորական մարմնի կամ հաստատության անդամ: Սակայն, այս կազմակերպությունը ՀՄՖ-ի անդամ չէ, աուդիտորը պարտավորվում է գործողությունն իրականացնել ՀՄՖ-ի ստանդարտներին և էթիկային համապատասխան՝ ըստ այս տեխնիկական առաջադրանքի:

Եվրոպական պառլամենտի և Խորհուրդի 2006/43/ ԵՀ հրահանգի դրույթներով սահմանված հանրային վերահսկողության սկզբունքներին համապատասխան (սա վերաբերում է ԵՄ անդամ պետությունում գտնվող աուդիտորների և աուդիտորական ընկերություններին):

- Աուդիտորը և/կամ ընկերությունը գրանցված են որպես հաստիքային աուդիտոր երրորդ երկրում հանրային վերահսկողության մարմնի հանրային ռեգիստրում և այդ ռեգիստրը ենթարկվում է հանրային վերահսկողության սկզբունքներին, ինչպես սահմանված է տվյալ երկրի օրենսդրության մեջ (այսինքն՝ աուդիտորներ և աուդիտորական կազմակերպություններ, որոնք հիմնված են երրորդ երկրում):

Աուդիտորը պետք է նաև ունենա

- Անդամակցություն հաշվապահական ընկերությունների միջազգային ցանցում
- Առնվազն 10 տարվա փորձ տվյալ ոլորտում
- Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորվող նախագծերի աուդիտի փորձ
- Էներգետիկ ոլորտում աուդիտորական ծառայությունների տրամադրման փորձ (ցանկալի է)

Համապատասխան դերակատարություն ունեցող փորձագետների որակավորման պահանջներն են՝

- ա) ներգրավվող գործընկերը պետք է ունենա
 - առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ, գերադասելի է 7 տարին ղեկավար դերում
 - միջազգայնորեն ճանաչված մասնագիտական որակավորում (ACCA կամ համարժեք)
 - միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերի (գերադասելի է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր) աուդիտի անցկացման փորձ
- բ) աուդիտի ղեկավարը պետք է ունենա
 - առնվազն 7 տարվա մասնագիտական փորձ
 - միջազգային ֆինանսական հաստատությունների և դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերի (գերադասելի է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր) աուդիտի անցկացման փորձ

4. Ներգրավման առարկա

Սույն ներգրավվածության առարկան միջանկյալ (յուրաքանչյուր 6 ամիս) և վերջնական (տարեկան) ֆինանսական հաշվետվություններն են՝ կապված 2018թ. մարտի 1-ից մինչև 2020թ. մարտի 1-ը ընկած ժամանակահատվածում «Երևան.Արևային համայնք» գործողության (այսուհետ՝ Գործողություն) իրականացման Դրամաշնորհային պայմանագրի հետ: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն անգլերեն և հայերեն լեզուներով: Ակնկալվում է, որ Աուդիտորը միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կիրականացնի ծախսերի վերաբերյալ աուդիտ: Աուդիտորը պետք է հաշվապահների համար իրականացնի մեկօրյա ուսուցում՝ տրամադրելով խոհրդատվություն տարբեր ծախսերի հետ կապված օժանդակ փաստաթղթերի վերաբերյալ:

5. Ներգրավման պատճառը

Համակարգողը Պայմանագրի լիազոր մարմնին պետք է ներկայացնի արտաքին աուդիտորի կողմից կազմված ծախսերի ստուգման հաշվետվություն, համաձայն Դրամաշնորհային Պայմանագրի ընդհանուր պայմանների 15-րդ հոդվածի: Հանձնաժողովի լիազորված պաշտոնատար անձը պահանջում է այս հաշվետվությունը, քանի որ Համակարգողի կողմից պահանջվող ծախսերի վճարումը պայմանավորված է սույն հաշվետվության փաստացի բացահայտումներից:

6. Ներգրավման տեսակը և նպատակը

Այս ծախսերի ստուգումը հանդիսանում է դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ որոշակի համաձայնեցված ընթացակարգեր իրականացնելու պարտավորություն: Այս ծախսերի ստուգման նպատակն է աուդիտորի կողմից իրականացնել հատուկ հանձնարարականներ, որոնք նշված են տեխնիկական առաջադրանքի Հավելված 2 Ա-ում և Համակարգողին ներկայացնել փաստացի բացահայտումների վերաբերյալ հաշվետվություն, որը

կազմվել է հատուկ ստուգման ընթացակարգերին համաձայն: Ստուգում նշանակում է, որ աուդիտորը ստուգում է համակարգողի ֆինանսական հաշվետվության փաստացի տեղեկատվությունը և համեմատում է այն Դրամաշնորհային պայմանագրի պայմանների հետ: Քանի որ այդ ներգրավվածությունը հավաստիացման ներգրավվածություն չէ, աուդիտորը չի տրամադրում աուդիտորական եզրակացություն: Պայմանագրի լիազոր մարմինը գնահատում է աուդիտորի կողմից ներկայացված փաստացի բացահայտումները և եզրակացություն անում այդ փաստացի բացահայտումների հիման վրա:

7. Ստանդարտներ և էթիկա

Աուդիտորը պետք է ստանձնի այս պարտավորությունը՝ համաձայն հետևյալ կետերի.

- Միջազգային ստանդարտներ համապատասխան ծառայությունների համար 4400 ներգրավվածություն իրականացնելու համաձայնեցված ընթացակարգեր՝ ֆինանսական տեղեկության վերաբերյալ,
- Հաշվապահների միջազգային վարվելակերպի ստանդարտների խորհրդի կողմից մշակված և թողարկված Հաշվապահների միջազգային վարքագծի կանոնագիրք, որը հաստատում է աուդիտորների համար հիմնարար էթիկայի սկզբունքները՝ կապված ամբողջականության, օբյեկտիվության, անկախության, մասնագիտական հմտության և պատշաճ գործունեության, գաղտնիության, վարքագծի և տեխնիկական ստանդարտների հետ: Չնայած Հաշվապահների միջազգային վարքագծի կանոնագիրքը նախատեսում է, որ անկախությունը համաձայնեցված ընթացակարգային պարտավորությունների համար պահանջ չէ, այնուամենայնիվ Պայմանագրի լիազոր մարմինը պահանջում է, որ աուդիտորը անկախ լինի Շահառուից (ներից) և առընթեր մարմնից և համապատասխանի Հաշվապահների միջազգային վարքագծի էթիկայի կանոնագրքի անկախության պահանջներին:

8. Ընթացակարգեր, ապացույցներ և փաստաթղթեր

Աուդիտորը պետք է այնպես աշխատի, որպեսզի իրականացնի արդյունավետ ծախսերի ստուգում: Աուդիտորը պետք է կատարի այս տեխնիկական առաջադրանքի Հավելված 2Ա-ում թվարկված ընթացակարգերը («Կատարման ենթակա կոնկրետ ընթացակարգերի ցանկ») և կիրառի Հավելված 2Բ-ի (իրականացման համար հատուկ ընթացակարգերի ուղեցույց) ուղեցույցները: Հավելված 2Ա-ի ընթացակարգերը կատարելու համար օգտագործվող ապացույցները ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվություններն են, ինչը հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվության մեջ ուսումնասիրել Համակարգողի կողմից պահանջվող ծախսերը: Աուդիտորն օգտագործում է այդ ընթացակարգերից ձեռքբերված ապացույցները՝ որպես հիմք ընդունելով փաստացի բացահայտումների հաշվետվությունը: Աուդիտորը փաստաթղթավորում է այդ փաստերը՝ համաձայն ISRS 4400-ի և տեխնիկական առաջադրանքի:

9. Հաշվետվողականություն

Ծախսերի ստուգման հաշվետվությունը պետք է նկարագրի ներգրավվածության նպատակը, համաձայնեցված ընթացակարգերը և փաստացի բացահայտումները, որպեսզի Համակարգողը և Պայմանագրի լիազոր մարմինը կարողանան հասկանալ աուդիտորի կողմից իրականացվող ընթացակարգերի բնույթն ու ծավալները, ինչպես նաև ներկայացված տեղեկությունը: Սույն տեխնիկական առաջադրանքի Հավելված 3-ի ԵՄ-ի դրամաշնորհային պայմանագրի ծախսերի հավաստման մոդելի հաշվետվության օգտագործումը պարտադիր է: Այս հաշվետվությունը պետք է ներկայացվի աուդիտորի կողմից Համակարգողին՝ հիմնական պայմանագրում նշված աշխատանքային օրվա ընթացքում՝ պայմանագրի ստորագրման օրվանից հետո:

10. Աշխատանքների տևողությունը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2020թ.

ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածը՝ երկարացման հնարավորությամբ:

11. Վճարման պայմանները՝ վճարումը կկատարվի ՀՀ դրամով:

12. Դիմելու ընթացակարգը

Կարող են դիմել համապատասխան որակավորմամբ շահագրգիռ թեկնածուները: Դիմումը պետք է ներառի հետևյալը՝

- կոնտակտային տվյալները (էլեկտրոնային փոստի հասցե և հեռախոսահամար),
- ամփոփ նկարագրությունը/հիմնավորում, թե ինչու է տվյալ ընկերությունը առավելագույն

- ֆինանսական առաջարկություն:

13. Հավելվածներնայլն

Հավելված 2Ա

Կատարված հստակ ընթացակարգերի ցանկ

Հավելված 2Բ

Կատարված հստակ ընթացակարգերի ուղեցույցներ

Հավելված 3

Մոդելային հաշվետվություն ԵՄ դրամաշնորհային պայմանագրի ծախսերի ստուգման համար

Հավելված 2Ա

Իրականացվելիք հատուկ ընթացակարգերի ցանկ

[Այս Հավելվածում թվարկված է իրականացվելիք հատուկ ընթացակարգերի ստանդարտացանկը, որը ենթակա է փոփոխման]

1 Ընդհանուր ընթացակարգ

Դրամաշնորհային պայմանագրի պայմաններ եվ դրույթներ

Աուդիտոր.

- Դրամաշնորհային պայմանագրի պայմանների և դրույթների վերաբերյալ տեղեկության ձեռքբերում՝ դրամաշնորհային պայմանագրի, հավելվածների, այլ համապատասխան տեղեկության վերանայմամբ, ինչպես նաև Համակարգողի հարցման միջոցով:
- Դրամաշնորհային պայմանագրի բնօրինակի պատճենը (ստորագրված է Շահառուի (ներիի) և Պայմանագրի լիազոր մարմնի կողմից) հավելվածներով:
- Դրամաշնորհային պայմանագրի 2.1 Հոդվածի ընդհանուր պայմանների համաստացում և վերանայում (որը ներառում է պատմողական և ֆինանսական բաժինը):
- Դրամաշնորհային պայմանագրի բազմաշահառու կամ մեկ շահառու լինելը (տե՛ս Դրամաշնորհային պայմանագրի ներածության մասը, բազմաշահառու դրամաշնորհային պայմանագրի դեպքում օգտագործվում է «Համակարգող» տերմինը):
- Հաստատում է, արդյոք շահառուն (ները) ունեն առընթեր մարմին (ներ) (տես՝ Հատուկ պայմանների Հոդված 7.1 -ը):

Նշում. Վերջին երկու ընթացակարգերի նպատակն է, որպեսզի աուդիտորը հասկանա շահառուի (ների) հաշվետվությունների ներկայացման պատասխանատվությունը և թե ինչքանով են հասանելի փաստաթղթերը և աշխատակիցները:

Գործնական ուղեցույցը տրամադրում է կարևոր տեղեկություններ դրամաշնորհային պայմանագրերի համար (օրինակ՝ հիմնական կանոններ և մրցանակային ընթացակարգեր): Անհրաժեշտության դեպքում հղում կկատարվի Գործնական ուղեցույցին:

Գործնական ուղեցույցի համար այցելեք հետևյալ կայքը՝

<http://ec.europa.eu/europeaid/prag/document.do> .

Վերջին հիմնական փաստաթղթերը, որոնք հատկապես կապված են դրամաշնորհային պայմանագրերի հետ, կարելի է ներբեռնել հետևյալ կերպ՝ Գործնական ուղեցույց- հավելվածներ- Դրամաշնորհ: Առաջարկների հրավերում առկա ստորագրված տարբերակը այն տարբերակն է, որը պետք է օգտագործվի որպես հղում:

Դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական հաշվետվություն

Աուդիտորը հաստատում է, որ Ֆինանսական հաշվետվությունը համապատասխանում է Դրամաշնորհային պայմանագրի ընդհանուր պայմանների 2-րդ հոդվածի հետևյալ պայմաններին՝

- Ֆինանսական հաշվետվությունը պետք է համապատասխանի Դրամաշնորհային պայմանագրի VI հավելվածի մոդելին:
- Ֆինանսական հաշվետվությունը պետք է ներառի Գործողության նոցամիտ ծախսերը, անկախ այն բանից, թե որ մասն է ֆինանսավորվում Պայմանագրի լիազոր մարմնի կողմից:
- Ֆինանսական հաշվետվությունը պետք է կազմվի Դրամաշնորհի պայմանագրի լեզվով:
- Սարքավորումների, տրանսպորտային միջոցների և պարագաների սեփականության փոխանցման ապացույց, որի գնման արժեքը գերազանցում է 5 000 եվրո յուրաքանչյուր ապրանքի համար (Դրամաշնորհային պայմանագրի ընդհանուր պայմանների հոդված 7.6)՝ պետք է կցվի վերջնական ֆինանսական հաշվետվությանը:

Հաշվապահական եվ հաշվառման վարման կանոններ

- Աուդիտորը ստուգում է արդյոք Շահառուն, սույն Հավելվածում թվարկված ընթացակարգերն իրականացնելիս, հետևել է Դրամաշնորհային պայմանագրի ընդհանուր պայմանների 16-

- Գործառնության իրականացման համար Շահառուի կողմից պահվող հաշիվները պետք է լինեն ճշգրիտ և կանոնավոր:
- Շահառուն պետք է ունենա կրկնակի մուտքով գրանցման համակարգ:
- Գործողությանն առընչվող հաշիվներն ու ծախսերը պետք է հնարավոր լինի ստուգել, պետք է լինեն ճանաչելի:

Ֆինանսական հաշվետվության համապատասխանեցումը Շահառուի (ների) հաշվապահական հաշվառման համակարգին եվ գրանցումներին

Աուդիտորը համեմատում է Ֆինանսական հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունը շահառուի հաշվապահական հաշվառման համակարգի և գրառումների հետ (օրինակ՝ փորձաշրջանի հաշվեկշիռ, ընդհանուր հաշվապահական հաշիվներ, ենթահաշիվներ և այլն):

Փոխարժեքները

Աուդիտորը հաստատում է, որ Գործողության ֆինանսական հաշվետվությունը նշված է Հատուկ պայմաններում սահմանված արժույթով և Ընդհանուր պայմանների 15.9-րդ հոդվածին համաձայն: Աուդիտորը հավաստում է, որ Գործարքի շահառուի հաշիվներում օգտագործված այլ արժույթներով կատարված ծախսերը փոխարկվել են Շահառուի սովորական հաշվապահական հաշվառման եղանակներին համապատասխան և ընդհանուր պայմանների 15.10-րդ հոդվածին համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ հատուկ պայմաններում:

Պարզեցված ծախսերի տարբերակներ

- Աուդիտորը ստուգում է Դրամաշնորհային պայմանագրի Հավելված 3-ի Գործողությունների բյուջեն՝ ճշտելու համար, արդյոք Շահառուն դիմել է պարզեցված ծախսերի իրականացմանը, այն է՝ իրականացրել է որևէ ծախս կամ ծախսերի համակցություն, միանվագ փոխանցում, ֆիքսված տոկոսով ֆինանսավորում և/կամ հատկացում: Որևէ գործողության համար իրավասու ծախսեր կարող են համարվել փաստացի ծախսերը կամ ծախսերի համակցությունը, միանվագ փոխանցումը, ֆիքսված տոկոսով ֆինանսավորումը և/կամ հատկացումը: Պարզեցված ծախսերի տարբերակները կարող են կիրառվել Գործողությունների բյուջեի և Ֆինանսական հաշվետվության մեկ կամ մեկից ավելի ուղղակի բյուջետային հոդվածներով (այսինքն 1-ից 6 ծախսային հոդվածներով) կամ նշված ծախսային հոդվածների ենթահոդվածներով և ծախսերի մասով:
- Աուդիտորին ներկայացված պայմաններից են՝
 - **Ընդհանուր պայմանների հոդված 2.1.գ.** Սույն հոդվածը նախատեսում է, որ պարզեցված ծախսային տարբերակների դեպքում Գործողությունների մասին հաշվետվությունը (պատմողական և ֆինանսական) պետք է տրամադրի որակյալ և քանակական տեղեկատվություն, որն անհրաժեշտ է հատուկ պայմաններում սահմանված փոխհատուցման պայմանների կատարման համար:
 - **Ընդհանուր պայմանների 14.3-ից 14.5-րդ հոդվածներ.** Պարզեցված ծախսերի տարբերակների համար նախատեսված դրույթներ:
 - Բաշխման հատուկ պայմանների **7.1-րդ հոդված:**

Եթե պարզեցված ծախսային տարբերակները կիրառելի են, ապա աուդիտորը կատարում է 3.1. (2) - ում սահմանված հատուկ ընթացակարգերը:

Ընթացակարգեր հավաստելու ծախսերի համապատասխանությունը բյուջեին եվ վերլուծական հաշվետվությանը

Դրամաշնորհային պայմանագրի բյուջե

Աուդիտորը կատարում է Ֆինանսական հաշվետվության ծախսերի վերնագրերի վերլուծական վերանայում:

Աուդիտորը հաստատում է, որ Ֆինանսական հաշվետվությունում բյուջեն համապատասխանում է դրամաշնորհային նպայմանագրի բյուջեին, և որ ծախսերը կատարվել են դրամաշնորհային պայմանագրի բյուջեին համապատասխան:

Դրամաշնորհային պայմանագրի բյուջեում կատարված փոփոխություններ

Աուդիտորը ստուգում է դրամաշնորհային պայմանագրի բյուջեում հնարավոր փոփոխությունները: Եթե փոփոխություն կատարվել է, ապա Աուդիտորը հաստատում է, որ Համակարգողը՝

- Պահանջել է կատարել բյուջեի փոփոխություն և ստացել է Դրամաշնորհաիին ասամանագրին

- տեղեկացրել է փոփոխություն կատարելու մասին Պայմանագրի լիազոր մարմին, եթե փոփոխությունը կատարվել է Ընդհանուր պայմանների 9.4-րդ հոդվածի շրջանակներում և Դրամաշնորհային պայմանագրի լրացում չի պահանջվել:

Ընտրված ծախսը հաստատելու կարգը

Ծախսերի իրավասություն

Աուդիտորը հաստատում է, որ յուրաքանչյուր ընտրված ծախսի բաժինը համապատասխանում է ստորև ներկայացված չափանիշներին:

(1) Առաջացած ծախսերի իրավասություն (Հոդված 14.1)

Աուդիտորը ստուգում է, որ փաստացի ծախսերը ընտրված միավորի համար իրականացվել են և պատկանում են Շահառուին (ներին) կամ առընթեր մարմնին (ներին): Աուդիտորը պետք է հաշվի առնի 14.1-րդ հոդվածի (i) -ից (iii) կետերում սահմանված փաստացի ծախսերի մանրամասն պայմանները: Այդ նպատակով, Աուդիտորն ուսումնասիրում է հաստատող փաստաթղթերը (օրինակ՝ հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրեր), ինչպես նաև վճարումների հաստատումները: Աուդիտորը ստուգում է նաև կատարված աշխատանքի, ստացված ապրանքների կամ ծառայությունների մատուցման ապացույցը:

Ծախսերի հաշվետվության վերջնական փուլը, որոնք իրականացվել են կատարման ժամանակաշրջանում, սակայն դեռևս չեն վճարվել, կարող է համարվել որպես փաստացի ծախսեր, այն պայմանով, որ (1) գոյություն ունի պարտավորություն (ապրանքի պատվեր, հաշիվ-ապրանքագիր կամ համարժեք փաստաթուղթ) տրամադրվող ծառայությունների կամ ապրանքների համար (2) վերջնական ծախսերը հայտնի են և (3) այդ ծախսերը ներկայացված են վերջնական ֆինանսական հաշվետվությունում (Հավելված VI)² հաշվարկված վճարման ամսաթվով (տես 14.1.ա հոդվածը): (ii) Ընդհանուր պայմաններից, աուդիտորը ստուգում է, արդյոք փաստացի վճարումներն իրականացվել են աուդիտի իրականացման ժամանակ:

(2) Պարզեցված արժեքի տարբերակներ³ (Հոդված 14.3 – 14.5)

Այն դեպքում, եթե պարզեցված ծախսային տարբերակներ են կիրառվում (տե՛ս ընդհանուր ընթացակարգ 1.6), ապա աուդիտորը ստուգում է.

- Դրամաշնորհային պայմանագրի ո՛ր տարբերակներն են կիրառվում (այսինքն՝ միավորի ծախսեր, միանվագ գումարներ, ֆիքսված ֆինանսավորում կամ բաշխում) և որի համար (ենթա) ծախսեր և/կամ ծախսային հոդվածները (հավելված III (դրամաշնորհային պայմանագրի բյուջե):
- Դրամաշնորհային պայմանագրի ո՛ր գումարը (ները) կամ տոկոսադրույքն (ները) է համաձայնեցված պայմանագրով (դրամաշնորհային պայմանագրի III հավելված «Գործողության բյուջե»):
- Որքան քանակական և (կամ) որակական տեղեկատվություն է օգտագործվել հայտարարված ծախսերը որոշելու և հիմնավորելու համար (օրինակ՝ աշխատակիցների քանակը, ձեռք բերված ապրանքների քանակը, ծախսերի տեսակն ու միանվագ գումարով ֆինանսավորվող գործունեությունը)³:
- միայն միավոր ծախսերի, միանվագ գումարների և ֆիքսված ֆինանսավորման համար. արդյոք յուրաքանչյուր շահառուի համար պարզեցված ծախսային տարբերակների առավելագույն գումարները (այդ թվում, եթե կիրառելի է առընթեր մարմինը (ներ) պարզեցված ծախսային տարբերակները) չեն գերազանցում պայմանագրով սահմանված պայմանները:

² Լրացուցիչ տեղեկությունների համար՝ « E3a2 ստուգաթերթ՝ պարզեցված ծախսերի տարբերակների համար » հավելյալ տեղեկության համար պրակտիկ օգտագործման ուղեցույց:

³ III հավելվածում (Գործողությունների բյուջե), համապատասխան բյուջեի յուրաքանչյուր հոդվածի կամ վերնագրի համար թիվ 2 աշխատանքային թերթիկի երկրորդ սյունը («Գնահատված ծախսերի հիմնավորում») պետք է:

- տեղեկատվություն և մեթոդներ սահմանելու պարզեցված ծախսերի տարբերակների գումարները կամ տոկոսները, և այլն
- բացատրել վերջնական իրավասու գումարի հաշվարկման ձևակերպումները.
- պարզել պարզեցված ծախսերի տարբերակ օգտագործող շահառուին (առընթեր մամին, առաօհն

- հայտարարված ծախսերի հետ կապված քանակական և որակական տեղեկատվության հստակություն (այսինքն, անհրաժեշտություն, տրամաբանություն, իրականություն):
- միանվագ գումարների, միավորի ծախսերի, ֆիքսված ֆինանսավորման կամ բաշխման ծախսերը ներառված չեն այլ ուղղակի ծախսերում (ծախսերի վերնագրերը 1-6), ներառյալ՝ փաստացի կամ պարզեցված ծախսային տարբերակները:
- Ֆինանսական հաշվետվությունում նշված ընդհանուր ծախսերը ճշգրիտ են:

Ծանոթագրություն. Աուդիտորը պարտավոր չէ ստուգել փաստացի ծախսերը, որոնց վրա հիմնվում են միանվագ գումարները, միավորի ծախսերը կամ ֆիքսված ֆինանսավորումը:

(3) **Դադարեցում** — Իրականացման ժամանակաշրջան(Հոդված 14.1ա)

Աուդիտորը ստուգում է, թե արդյոք ընտրված հոդվածի ծախսերը կատարվել են Գործողության իրականացման ժամանակահատվածում: Բացառություն է կազմում վերջնական հաշվետվությունների հետ կապված ծախսերը, ներառյալ գործողությունների իրականացման ծախսերի ստուգումը, աուդիտը և Գործողության գնահատման վերջնական հաշվետվությունը, որը ներկայացվել Գործողության իրականացման ժամանակահատվածից հետո:

(4) **Բյուջե** (Հոդված 14.1բ)

Աուդիտորը հաստատում է, որ ընտրված հոդվածի ծախսը նշված է Գործողությունների բյուջեում:

(5) **Անհրաժեշտ** (Հոդված 14.1գ)

Աուդիտորը ստուգում է, թե արդյոք ընտրված հոդվածի ծախսերը անհրաժեշտ են եղել Գործողության իրականացման համար և ենթարկվում է գործողությունների պայմանագրային գործառույթներին, ուսումնասիրելով ծախսերի բնույթը՝ աջակցող փաստաթղթերով:

Գրառումներ (Հոդված 14.1դ)

Աուդիտորը հաստատում է, որ ընտրված հոդվածի ծախսերը գրանցվում են Շահառուի (ների) հաշվառման համակարգում և գրանցվել են Շահառուի երկրի հաշվապահական ստանդարտներին և Շահառուի սովորական ծախսերի հաշվառման գործելակերպին համապատասխան:

(6) **Կիրառվող օրենսդրություն** (Հոդված 14.1ե)

Աուդիտորը ստուգում է ծախսերի համապատասխանելիությունը հարկային և սոցիալական ապահովության օրենսդրության պահանջներին, որտեղ դա կիրառելի է (օրինակ՝ գործատուի հարկերի մի մասը, կենսաթոշակային ապահովագրավճարները և սոցիալական ապահովության վճարները):

(7) **Հիմնավորված** (հոդված 14.1զ)

Աուդիտորը ստուգում է ընտրված հոդվածի ծախսերի հիմնավորումների ապացույցները (տես՝ Հավելված 2Բ-ի 1-ին բաժինը, իրականացման հատուկ ընթացակարգի ուղեցույց) և Դրամաշնորհային պայմանագրի ընդհանուր պայմանների 16.8 և 16.9-րդ հոդվածներում նշված օժանդակ փաստաթղթերը:

(8) **Գնահատում**

Աուդիտորը ստուգում է ընտրված ծախսային հոդվածի դրամական արժեքի համապատասխանումը հիմնական փաստաթղթերին (օրինակ, հաշիվ-ապրանքագրեր, աշխատավարձի մասին հաշվետվություններ) և, եթե կիրառելի է, ճիշտ փոխարժեքների օգտագործումը:

(9) **Դասակարգում**

Աուդիտորը ստուգում է ընտրված հոդվածի ծախսերի բնույթը և որ ծախսային հոդվածը դասակարգվել է Ֆինանսական հաշվետվության ճիշտ (ենթաբաժին) հոդված ներքո:

(10) **Համապատասխանումը Գնումների սկզբունքներին և ազգության ու ծագման կանոններին**

Աուդիտորը ստուգում է, թե արդյոք Շահառուն ավարտել է իրականացման պայմանագրերը կապալառուների հետ, համաձայն Դրամաշնորհային պայմանագրի 10.1 և 14.1.ա (iv) հոդվածների, և որոնց համար են կիրառվել ծախսերի (ենթա) անվանումները, ծախսային հոդվածների դասը (երը):

Աուդիտորը ստուգում է, որ ընտրված հոդվածի ծախսերը համապատասխանում են գնումների սկզբունքներին և քաղաքացիության և ծագման սկզբունքներին, ինչպես սահմանված է IV հավելվածին (Գնումներ Դրամաշնորհային շահառուների կողմից՝ Եվրոպական միության արտաքին գործողությունների գնումների համատեքստում):

Այդ նպատակով, աուդիտորը ստուգում է գնման գործընթացի հիմքում ընկած փաստաթուղթերը. աու

Այն դեպքում, երբ աուդիտորը գտնում է չհամապատասխանող խնդիրներ, ապա հաղորդում այդ խնդիրների բնույթի և ֆինանսական ազդեցության վերաբերյալ՝ անբավարար ծախսերի տեսանկյունից: Աջակցող փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ Աուդիտորը հաշվի է առնում հավելված 2Բ- ի վերջում թվարկված ռիսկի ցուցանիշները:

Իրավասուողակիծախսեր (Հոդված 14.2)

(1) Աուդիտորը ստուգում է, որ Ֆինանսական հաշվետվության անմիջական ծախսերի վերնագրերից մեկում (1-ից 6-րդ) գրառված ընտրված ապրանքների ծախսերը ծածկվում են 14.2 հոդվածում սահմանված ուղակիծախսերով:

(2) Աուդիտորը ստուգում է, որ պարտականությունները, հարկերը և վճարները, ներառյալ ԱԱՀ-ն, որոնք ուղակիորեն կատարվում են ուղակիծախսերով, չեն վերականգնվում շահառուի (ների) և/ կամ առընթեր մարմնի (ների) կողմից (տես՝ Ընդհանուր դրույթների 14.2. հոդվածը): Աուդիտորը ռապացույցներ է ձեռք բերում, որ Շահառուն (ները) կամ առընթեր մարմինը (ները) չեն կարող վերադարձնել տուրքերը, հարկերը կամ վճարները, ներառյալ ԱԱՀ-ն՝ ազատման համակարգի միջոցով և/կամ փոխհատուցման միջոցով: Այդ նպատակով աուդիտորը պետք է հղում կատարի Հավելված E3a1 (Տեղեկատվություն հարկային տեսիմասին) հավելվածին, որն ապահովում է տեղեկություններ դրամաշնորհային պայմանագրերի նկատմամբ կիրառվող հարկային կարգի վերաբերյալ (Ծանոթագրություն. Ստանդարտ ձևանմուշ/ տեքստը կցվում է ԳՈՒ-ի կայքում՝ վերոնշյալ 1.1 ընթացակարգ):

Այն դեպքում, երբ Հատուկ պայմանների 7-րդ հոդվածը նախատեսում է, որ պարտականությունները, հարկերը և գանձումները, ներառյալ ԱԱՀ-ը, իրավասու չեն, բայց ներդրվում է «ընդունված ծախսերի համակարգ»- Դրանք մնում են անիրավասու ծախսեր, բայց կարող են ընդունվել որպես համաֆինանսավորում: Հետևաբար, աուդիտորը լրացուցիչ ստուգում է, որ ֆինանսական հաշվետվության 12-րդ գլխում ներկայացված հարկի գումարը պատշաճ կերպով հաշվարկվում է ժամանակ փաստաթղթերի հետ միասին (օրինակ՝ հաշվապարանքագրեր) և համապատասխանում է ֆինանսական հաշվետվությունների 1-ից 10-րդ գլուխներում ներառված իրավասու ծախսերին:

Չնախատեսված ծախսեր (Հոդված 14.6)

Աուդիտորը ստուգում է, որ չնախատեսված ծախսերը (Ֆինանսական հաշվետվության 8-րդ գլուխ) չեն գերազանցում Գործողության ուղակի իրավասու ծախսերի 5% - ը կամ Համակարգողը ձեռք է բերել նախնական գրավոր թույլտվություն Պայմանագրային մարմնի կողմից, այս չնախատեսված ծախսերի համար:

Անուղակիծախսեր (Հոդված 14.7)

Աուդիտորը ստուգում է, որ անուղակի ծախսերով ծածկվող գերավճարները (Ֆինանսական հաշվետվության 10-րդ գլուխ) չգերազանցեն Գործողության ուղակի իրավասու վերջնական ծախսերի գումարի 7% կամ, եթե կիրառելի է, Դրամաշնորհային պայմանագրի Հոդված 3-ի Հատուկ պայմաններում նշված տոկոսը:

Բնաիրային ներդրումներ (Հոդված 14.8)

(1) Աուդիտորը ստուգում է, որ Ֆինանսական հաշվետվության ծախսերը չեն ներառում բնաիրային ներդրումներ: Ցանկացած բնաիրային ներդրում (պետք է թվարկված լինի Հավելվածում III-ում՝ Գործողության բյուջեում), փաստացի ծախս չէ և չի համարվում իրավասու ծախս:

(2) Բնաիրային ներդրումները կարող են համարվել որպես համաֆինանսավորում, և այդ դեպքում դա պետք է հստակ սահմանված լինի դրամաշնորհային պայմանագրի 7.1-րդ հոդվածում: Աուդիտորը ստուգում է, արդյոք նման համաֆինանսավորումը կիրառելի է, և արդյոք այն համապատասխանում է Ֆինանսական հաշվետվության 12-րդ հոդվածին:

Ոչիրավասու ծախսեր (Հոդված 14.9)

Աուդիտորը ստուգում է, որ ընտրված ապրանքի ծախսերը չհամարվեն ոչ իրավասու ծախսեր, ինչպես նկարագրված է ընդհանուր պայմանների 14.9-րդ հոդվածում: Այդ ծախսերը ներառում են, մասնավորապես, արտարժույթի փոխանակման կորուստները:

Գործողության նկատմամբ

Գործողության մաս կազմող այլ եկամուտներ տրամադրվել են Գործողությանը և ներկայացվել են Ֆինանսական հաշվետվությունում: Նամանատիպ դեպքերում աուդիտորը Շահառուի (ների) հետ ուսումնասիրում է Շահառուի կողմից ձեռքբերված փաստաթղթերը: Չիակնկալվում, որ աուդիտորը պետք է ուսումնասիրի զեկուցված եկամուտների համբողջականությունը:

Հավելված 2Բ Իրականացվող հատուկ ընթացակարգերի ուղեցույց

[Այս Հավելվածը տրամադրում է ստանդարտ ուղեցույցներ, որոնք պետք է կատարվեն կոնկրետ ընթացակարգերի համար և այդ ուղեցույցները չպետք է փոփոխվեն]

Ստուգման ապացույց

Հավելված 2 Ա-ում թվարկված կոնկրետ ընթացակարգերի կատարման ժամանակ աուդիտորը կարող է կիրառել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են հարցումը և վերլուծությունը, վերահաշվարկը, համեմատությունը, այլ ճշգրտության ստուգումները, դիտարկումները, գրառումները և փաստաթղթերի, ակտիվների և հաստատումների ձեռքբերումների ստուգում:

Աուդիտորը ձեռք է բերում ստուգման ապացույցներ այս ընթացակարգերից՝ ֆինանսական բացահայտումների հաշվետվությունը կազմելու համար: Ստուգման ապացույցը իր մեջ պարունակում է ամբողջական տեղեկատվություն փաստացի բացահայտումների վերաբերյալ, ինչպես նաև Ֆինանսական հաշվետվության հաշվապահական գրառումներ և այլ տեղեկություն (ֆինանսական և ոչ ֆինանսական):

Ստուգմանն առնչվող պայմանագրային պահանջներն են՝

Պետք է հնարավոր լինի ստուգել և պետք է արձանագրված լինեն Շահառուի հաշվապահական հաշվառման փաստաթղթերում (Դրամաշնորհայի պայմանագրի ընդհանուր պայմանների հոդված 14.1.7):

- Շահառուն (ները) թույլ կտա որևէ արտաքին աուդիտորին ստուգումներ իրականացնել հաշիվների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և ցանկացած այլ օժանդակ փաստաթղթերի հիման վրա: Շահառուն տրամադրում է Գործողության տեխնիկական և ֆինանսական կառավարման վերաբերյալ բոլոր փաստաթղթերի և տվյալների բազաները (ընդհանուր պայմանների 16.3-րդ հոդված):

- Դրամաշնորհային պայմանագրի ընդհանուր դրույթների 16.9-րդ հոդվածում թվարկված են ապացույցների տեսակների և բնույթի ցանկը:

Ավելին, 2A հավելվածում թվարկված ընթացակարգերի գրառումները, հաշվապահական հաշվառման և օժանդակ փաստաթղթերը՝

- պետք է հասանելի լինեն և այնպես արխիվացվեն, որ հեշտացնեն ստուգումները (Ընդհանուր դրույթների Հոդված 16.7),

- պետք է հասանելի լինեն բնօրինակի կամ պատճենների ձևով (ինչպես սահմանված է PRAG-ում), այդ թվում, էլեկտրոնային տարբերակով:

Ուղեցույց. Հաշվառումները և հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պետք է հասանելի լինեն փաստաթղթավորված թղթային, էլեկտրոնային կամ այլ տարբերակով (օրինակ՝ հանդիպման գրավոր արձանագրությունն ավելի վստահելի է, քան քննարկվող հարցերի բանավոր ներկայացումը): Էլեկտրոնային փաստաթղթերը կարող են ընդունվել միայն այն դեպքում, երբ՝

- փաստաթղթերը առաջին անգամ ստացվել կամ կազմվել են (օրինակ՝ պատվերի ձև կամ հաստատում), Շահառուի (ների) կողմից, էլեկտրոնային ձևով:

- Աուդիտորի կոմիտեի ընդունելի է, որ Շահառուն օգտագործում է էլեկտրոնային արխիվային համակարգ, որը համապատասխանում է սահմանված ստանդարտներին (օրինակ, հավաստագրված համակարգ, որը համապատասխանում է ազգային օրենսդրությանը):

- նախընտրելի է ձեռք բերվեն անկախ աղբյուրից՝ կառույցից դուրս (սկզբնական մատակարարի բնօրինակ հաշիվ-ապրանքագիրը կամ պայմանագիրն ավելի հուսալի է, քան նախապես հաստատված ստացականը):

- ներքին արտադրանքն ավելի հուսալի է, եթե այն ենթակվել է վերահսկողության և ստացել հաստատում:

- ձեռք է բերվել ուղղակիորեն Աուդիտորի կողմից (օրինակ՝ ակտիվների ստուգումը), համարվում է ավելի հավաստի, քան անուղղակի ձեռքբերված ապացույցները

Եթե աուդիտորը գտնում է,

որ ապացույցների վերլուծված չափանիշները բավարարչափոփրականացված չեն, ապա նա պետք է այդ մասին մանրամասներ ներկայացնի փաստացի բացահայտումներին մեջ:

Ծանոթացում Դրամաշնորհային պայմանագրի պայմաններին և դրոյթներին (Հավելված 2ԱԱ — ընթացակարգեր 1.1)

Աուդիտորը ծանոթանում է Դրամաշնորհային պայմանագրի պայմաններին և դրոյթներին: Աուդիտորը **հատուկ ուշադրություն** պետք է դարձնի Դրամաշնորհային պայմանագրի (գործողության նկարագիր) I հավելվածին, II հավելվածին (Ընդհանուր դրոյթներ) և IV հավելվածին (**Գնումներ Դրամաշնորհային շահառուների կողմից՝ ԵՄ-ի արտաքին գործողությունների համատեքստում**), որը տրամադրում է տեղեկություն գնումների սկզբունքների, քաղաքացիության և ծագման կանոնների վերաբերյալ: Այս սկզբունքներին կամ կանոններին չհամապատասխանելու դեպքում ԵՄ ֆինանսավորումը համարվում է ոչ իրավասու:

Աուդիտորը Շահառուի հետ պետք է ուսումնասիրի և վստահեցնի, որ գնումների համար կիրառելի սկզբունքները և ազգության և ծագման կանոնները հստակ և հասկանալի են: Այն դեպքում, եթե աուդիտորը գտնում է, որ պայմանները և դրոյթները բավարարչափոփ պարզ չեն, ապա նա **Շահառուից պետք է պարզաբանում պահանջի**:

Ստուգման համար ծախսերի ընտրություն (Հավելված 2 Ա - ընթացակարգեր 3.1 - 3.7)

Ֆինանսական հաշվետվությունում Համակարգողի կողմից պահանջվող ծախսերը հիմնականում ներկայացված են հետևյալ ծախսերի հոդվածների ներքո 1. Մարդկային ռեսուրսներ, 2. Ճանապարհորդություն, 3. Սարքավորում և մատակարարում, 4. տեղական գրասենյակ, 5. Այլ ծախսեր, ծառայություններ, 6. Այլ, 8. Չնախատեսված ծախսեր և 10. Անուղղակի ծախսեր: Ծախսերի վերնագրերը 1. եւ 6. ներկայացնում են: Ծախսի հոդվածներ՝ 1-ից 6-ը ներկայացնում են Գործողության ուղղակի ծախսերը: Ծախսերի հոդվածները կարող են բաժանվել ծախսերի ենթահոդվածների, օրինակ՝ 1.1 Աշխատավարձ:

Ծախսերի ենթահոդվածները կարող են բաժանվել անհատական ծախսերի կամ ծախսերի դասի, որոնք ունեն նույն կամ համանման հատկանիշներով ծախսային հոդվածներ: Աջակցող ապացույցների ձևը և բնույթը (օրինակ՝ վճարում, պայմանագիր, հաշիվ ապրանքագիր և այլն) և ծախսերի արձանագրումը (օրինակ՝ գրանցամատյանում գրառումները) տարբերվում են ծախսերի տեսակից և բնույթից և հիմքում ընկած գործողություններից կամ գործարքներից: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում ծախսային հոդվածները պետք է արտացոլեն գործողությունների կամ գործարքների հաշվապահական (կամ ֆինանսական) արժեքը՝ անկախ գործողության կամ գործարքի տեսակից և բնույթից:

Արժեքը պետք է լինի աուդիտորի կողմից օգտագործվող հիմնական գործոնը՝ համապատասխան ապրանքի ծախսի կամ ծախսերի ընտրության ստուգման համար: Աուդիտորը ընտրում է բարձրարժեք ծախսային հոդվածներ՝ ծախսերի համապատասխան ծածկույթ ապահովելու համար: Ծախսերի ստուգման կարգ (Հավելված 2Ա — ընթացակարգեր 3.1 – 3.7)

Աուդիտորը կիրառում է ստորև նշված սկզբունքներն ու չափորոշիչները, երբ նախատեսում է իրականացնել Հավելված 2 Ա-ում (ընթացակարգեր 3.1-3.7) նշված հատուկ ստուգման ընթացակարգերը ընտրված ծախսերի համար:

Աուդիտորի կողմից հաստատումը և ծախսային հոդվածների ստուգումը չի նշանակում բոլոր ծախսային հոդվածների ամբողջական և սպառիչ ստուգում, որոնք ընդգրկված են կոնկրետ ծախսային հոդվածի կամ ենթահոդվածի մեջ: Աուդիտորը պետք է ապահովի համակարգված և ներկայացուցչական ստուգում: Կախված որոշակի պայմաններից (տես՝ ստորև), աուդիտորը կարող է ձեռքբերել բավականաչափ ճշգրտման արդյունքներ՝ ծախսերի հոդվածի կամ ենթահոդվածի համար՝ դիտարկելով ընտրված ծախսային հոդվածների սահմանափակ թիվ:

Աուդիտորը կարող է կիրառել վիճակագրական նմուշառման մեթոդներ Ֆինանսական հաշվետվության մեկ կամ ավելի ծախսային հոդվածների կամ ենթահոդվածի ստուգման համար: Աուդիտորը ուսումնասիրում է, արդյոք, «տվյալային» (այսինքն, ծախսային ենթահոդվածները կամ ծախսային հոդվածների խմբերը) համընկնում են և բավականաչափ մեծ են (այսինքն՝ մեծ թվով կետերից են բաղկացած) արդյունավետ վիճակագրական նմուշառում իրականացնելու համար:

Եթե կիրառելի է, աուդիտորը պետք է բացատրի փաստացի բացահայտումների հաշվետվություն.

Ծախսերի ծածկույթի հարաբերակցությունը («ԾԾՀ») ծախսերի ընդհանուր գումարն է, որը հաստատվել է աուդիտորի կողմից և արտահայտվում է ներկայացված ծախսերի ընդհանուր գումարի տոկոսիչափով՝ ներկայացված Համակարգողի կողմից Ֆինանսական հաշվետվության մեջ: Այդ գումարը ներկայացված է դրամաշնորհային պայմանագրի V հավելվածում:

Աուդիտորը հավաստիացնում է, որ ընդհանուր ԾԾՀ - ն առնվազն 65% է: Եթե նա գտնում է ստուգված ծախսերի ընդհանուր գումարի 10% -ից պակաս բացառության գործոն (այսինքն՝ 6.5%), աուդիտորը վերջնականացնում է ստուգման ընթացակարգերը և շարունակում է հաշվետվությունների ներկայացման գործընթացը:

Եթե բացառության գործոնը 10%-ից ավել, Աուդիտորը երկարաձգում է ստուգման ընթացակարգերը մինչև ԾԾՀ-ն կկազմի առնվազն 85% է: Այնուհետև, Աուդիտորը եզրափակում է ստուգման ընթացակարգերը և շարունակում հաշվետվողականությունը՝ անկախ հայտնաբերված բացառության գործոնի քանակից: Աուդիտորը վստահեցնում է, որ յուրաքանչյուր ծախսային հոդվածի կամ ենթահոդվածի ԾԾՀ-ն Ֆինանսական հաշվետվությունում կազմում է առնվազն 10%:

Ընթացակարգեր ստուգելու ընտրված ծախսերը (Հավելված 2Ա — ընթացակարգեր 3.1 – 3.7) Աուդիտորը ստուգում է ընտրված ծախսերի կետերը, կիրառելով հավելված 2 Ա-ում թվարկված 3.1-3.11 ընթացակարգերը և զեկուցում հայտնաբերած բոլոր փաստացի բացահայտումների, բացառությունների վերաբերյալ, որոնք բխում են այդ ընթացակարգերից: Հաշվետվություններ է ներկայացնում այդ ընթացակարգերից ստացված բոլոր փաստացի բացահայտումների և բացառությունների վերաբերյալ: Ստուգման բացառությունները բոլորը շեղումներ են, որոնք հայտնաբերվել են Հավելված 2 Ա-ում հաստատված ընթացակարգերն իրականացնելիս:

Աուդիտորը ստուգում է բացահայտված բացառությունների գումարը և Եվրամիության կողմից իրականացված ներդրման վրա հնարավոր ազդեցությունը, արդյոք Հանձնաժողովը պետք է հայտարարի այդ ծախսերը ոչ իրավասու, (հաշվի առնելով Հանձնաժողովի ֆինանսավորման տոկոսները և անուղղակի ծախսերի վրա ազդեցությունը (օրինակ՝ վարչական ծախսեր, գերաձախս)): Աուդիտորը հաշվետվություն է ներկայացնում բոլոր հայտնաբերված բացառությունների վերաբերյալ, ներառյալ, այն ստուգված բացառության գումարը, որը չի կարող հաշվարկել, ինչպես նաև Եվրամիության ներդրման վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Օրինակ՝ եթե աուդիտորը գտնում է 1 000 եվրո բացառություն է դրամաշնորհային պայմանագրի գնման սկզբունքների վերաբերյալ, որտեղ ԵՄ-ն ֆինանսավորում է ծախսերի 60% -ը և որտեղ անուղղակի ծախսերը կազմում են ընդհանուր ուղղակի իրավասու ծախսերի 7% -ը, աուդիտորը հայտնում է 1 000 եվրո բացառության և 642 եվրո ֆինանսական ազդեցության վերաբերյալ ($€ 1 000 \times 60\% \times 1.07$):

Ռիսկերի ցուցանիշներ գնումներ

• Փաստաթղթերի ամսաթվերի անհամապատասխանությունները կամ ժամկետների անտրամաբանական հաջորդականությունը: Օրինակներ՝

– Մրցույթի շնորհման ամսաթիվը նշված է պայմանագրի շնորհումից առաջ կամ մրցույթային հրավերների ուղարկումից հետո,

– Մրցույթի շնորհման ամսաթիվը նշված է մինչև մրցույթ հայտարարելու ամսաթիվը կամ էապես ավելի ուշ ժամկետ,

– Մրցույթի շնորհման ամսաթիվը նշված է այլ մրցույթների շնորհման ամսաթվի հետ,

– Փաստաթղթերի ամսաթվերը հավաստիչ են, չեն համընկնում
ուղեկցող փաստաթղթերի ամսաթվերի հետ (օրինակ՝ մրցույթի շնորհման

ամսաթիվը ծրարի վրա չի համապատասխանում փոստային ամսաթվի հետ,

Ֆաքսի ամսաթիվը չի համապատասխանում ֆաքսի մեքենայի տպագրված ամսաթվի հետ,

• Նույն մրցույթի նմանակցող թեկնածուների կողմից հայտերի արտասովոր նմանություններ: Օրինակներ՝

– Նույն ձևակերպումները,

նախադասությունները և

տերմինաբանությունը տարբեր հայտատուների մրցույթներում,

– Նույն ձևաչափի առկայություն (օրինակ, տառատեսակը, տողերի չափսերը, պարբերությունների նշելու ձևը և այլն) տարբեր հայտատուների մոտ:

- Տարբեր հայտատուների մոտ նույն գների ներկայացում մի շարք ենթահամակարգորի կամ ապրանքների համար,
- Տարբեր հայտատուների մոտ նույնատիպ քերականություն, ուղղագրություն կամ տպագրական սխալներ,
- Նմանատիպ կնիքների և ստորագրությունների օգտագործում,
- Ֆինանսական հաշվետվության առկայություն, որտեղ նշված է, որ մրցույթին մասնակցող երկու հայտատուները միմյանց հետ փոխկապակցված են կամ հանդիսանում են միևնույն խմբի մաս (օրինակ՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կարող են բացահայտել խմբի սեփականատեր լինելու իրավունքը: Սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը կարող հայտնաբերվել նաև պետական գրանցման հաշիվներում):
- Ընտրության և որոշումների կայացման գործընթացի անհամապատասխանություններ: Օրինակներ՝
 - Մրցույթի շնորհման որոշումները չեն համապատասխանում ընտրության և մրցանակային չափանիշներին,
 - Ընտրության և գնահատման չափանիշների կիրառման սխալներ
 - Շահառուի հերթական մատակարարը մասնակցում է որպես մրցութային գնահատման հանձնաժողովի անդամ,
 - Մրցույթի մասնակիցների հետ արտոնյալ խարաբերությունների ռիսկի մասին այլ տարրեր և օրինակներ.
 - Նույն մրցույթի մասնակիցը (կամ փոքրիտումբը)
հրավիրվում է տարբեր պայմանագրերի մրցույթներին արտասովոր հաճախականությամբ,
 - Նույն մրցույթի մասնակիցը (կամ փոքրիտումբը)
շահում է հայտերի անսովոր բարձր մասնաբաժինը,
 - Մրցույթի հայտատուին հաճախակի է շնորհվում
ապրանքների և ծառայությունների մատուցման պայմանագրեր,
 - Հաղթող հայտատուներ կայացնում է մրցույթում չհրապարակված լրացուցիչ ապրանքների հաշիվ-ապրանքագրեր (օրինակ լրացուցիչ գաղտ մասներ,
առանց հիմնավոր պատճառաբանվածության, տեղադրման ծախսերի հաշիվ-ապրանքագրի ներկայացում, չնայած այն փաստի, որ դրանք նախատեսված չեն մրցութային փաստաթղթերում):
 - Այլ փաստաթղթեր, խնդիրներ և օրինակներ, որոնք խախտում են ռիսկեր են պարունակում.
 - Բնօրինակ փաստաթղթերի փոխարեն պատճենների օգտագործում,
 - Ֆորմալ հաշիվ-ապրանքագրի ներկայացում որպես ուղեկցող փաստաթղթեր պատճենական փաստաթղթերի փոխարեն,
 - Բնօրինակ փաստաթղթերում ձեռքով կատարված փոփոխություններ (օրինակ՝ թվերի փոփոխությունները կային),
 - Ոչ պաշտոնական փաստաթղթերի օգտագործում (օրինակ՝ բլանկի առկայություն, որտեղ չի երևում պաշտոնական (կամ) պարտադիր տեղեկատվություն, ինչպես օրինակ առևտրային ռեգիստրի համարը, ընկերության հարկային համարը և այլն):

Հավելված 3 ԵՄ Դրամաշնորհային պայմանագրի ծախսերի ստուգման հաշվետվության ձև
 ԻՆՉՊԵՍՕԳՏԱԳՈՐԾԵԼԱՅՍ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ. Հաշվետվության մեջ դեղնացված բոլոր տեքստերը հանդիսանում են ուղեցույց և աուդիտորը պետք է չնչն այն օգտագործելուց հետո: Նշված փակագծերում տեղեկատվությունը <..... > (օրինակ՝ Համակարգողի անվանումը) պետք է լրացվի աուդիտորի կողմից:

<Պետք է տպվի Աուդիտորի բլանկի վրա>
Դրամաշնորհային պայմանագրի ծախսերի ստուգման հաշվետվություն
Եվրոպական միության արտաքին գործողություններ
«Դրամաշնորհային պայմանագրի վերնագիր և համար»
Բովանդակություն
 Փաստացի բազահատումների հաշվետվություն

Հավելված 1 Դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական հաշվետվություն

**Հավելված 2 Ծախսերի ստուգման տեխնիկական առաջադրանք
Փաստացի բացահայտումների հաշվետվություն**

«Կոնտակտային անձի (անձանց) անուն», « պաշտոն»
«Համակարգողի անուն»
«Հասցե»

«ամսաթիվ»

Հարգելի «Կոնտակտային անձի (անձանց) անուն»

Համաձայն տեխնիկական առաջադրանքի <ամսաթիվ>, որը համաձայնեցրել եք մեր հետ, տրամադրում ենք փաստացի բացահայտումները («Հաշվետվություն»), որը վերաբերում է ժամանակաշրջանին (Հաշվետվության Հավելված 1): Դուք խնդրել եք իրականացնել որոշակի ընթացակարգեր կապված Ձեր ֆինանսական հաշվետվության և Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Պայմանագրի անվանումը և համարը», «Դրամաշնորհային պայմանագիր» շրջանակներում:

Նպատակ

Մեր ներգրավվածությունը կայանում էր նրանում, որ ստուգեինք ծախսերի հավաստի լինելը, որն էլ իր հերթին հանդիսանում է որոշակի համաձայնեցված ընթացակարգերի իրականացում, համաձայն Դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական հաշվետվության, որը կնքվել է Ձեր և <Եվրոպական Հանձնաժողովին կամ «Պայմանագրի լիազոր մարմնի միջև» Պայմանագրի լիազոր մարմնի միջև: Այս ծախսերի ստուգման նպատակն է իրականացնել որոշակի ընթացակարգեր՝ ներկայացնելու իրականացրած ընթացակարգերի վերաբերյալ փաստահավաք եզրակացություններ:

Ստանդարտներ և էթիկա

Մեր ներգրավվածությունն իրականացվել է համաձայն՝

Միջազգային ստանդարտներ հետևյալ ծառայությունների վերաբերյալ՝ 4400 ներգրավվածություն իրականացնելու համաձայնեցված ընթացակարգեր ֆինանսական տեղեկության վերաբերյալ, ինչպես հրապարակված է Հաշվապահների Միջազգային Ֆեդերացիայի («ՀՖՖ») կողմից:

ՀՖՖ-ի կողմից տրված հաշվապահների համար մասնագիտական էթիկայի կանոնագիրը. Չնայած ISRS 4400- ը սահմանում է, որ անկախությունը պարտադիր չէ համաձայնեցված ընթացակարգերի իրականացման համար, Պայմանագրի լիազոր մարմինը պահանջում է, որ աուդիտորը համապատասխանի մասնագիտական հաշվապահների համար էթիկայի կանոնների անկախության պահանջներին:

Իրականացված ընթացակարգեր

Համաձայն պահանջի մենք իրականացրել ենք միայն Հավելված 2 Ա-ում նշված ընթացակարգերը (տես՝ սույն հաշվետվության հավելված 2-ը):

Այս ընթացակարգերը որոշվել են միայն Պայմանագրի լիազոր մարմնի կողմից և ընթացակարգերը կատարվել են Պայմանագրի լիազոր մարմնին աջակցելու համար, որպեսզի Պայմանագրի լիազոր մարմինը գնահատի, թե արդյոք Ձեր կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվության ծախսերը համապատասխանում են Դրամաշնորհային պայմանագրի պայմաններին և դրույթներին: Քանի որ մեր կողմից կատարված ընթացակարգերը չեն համարվում որպես աուդիտ կամ վերանայում, իրականացված Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն, մենք չենք ներկայացնում որևէ երաշխիք ֆինանսական հաշվետվության վերաբերյալ:

Եթե մենք կատարեինք լրացուցիչ ընթացակարգեր կամ իրականացնեինք աուդիտ կամ վերանայում, համաձայն աուդիտի միջազգային ստանդարտներին, հնարավոր է այլ փաստեր նկատեինք և զեկուցեինք Ձեզ:

Տեղեկատվության աղբյուրներ

Հաշվետվությունը պարունակում է Ձեր կողմից ներկայացված տեղեկություն, որը ձեռք ենք բերել հարցման կամ Ձեր հաշիվներից և գրանցումներից:

Փաստացի բացահայտումներ

Ընդհանուր ծախսերի ստուգման գումարը կազմում է <xxxxxx> եվրո:

ծախսերի տոկոս և հանդիսանում է այս ծախսերի ստուգման առարկան: Այդ գումարը հավասար է Ֆինանսական հաշվետվությունում Ձեր կողմից ներկայացված ծախսերի ընդհանուր գումարին, որը պահանջել եք որպեսզի հանվի Դրամաշնորհային պայմանագրի նախաֆինանսավորման ընդհանուր գումարից: Վճարման պահանջը ներկայացվել է <ամսաթից>:

Մենք զեկուցում ենք մեր փաստացի բացահայտումների մանրամասները, որոնք բխում են այս հաշվետվության 2-րդ գլխում կատարված ընթացակարգերից:

Սույն հաշվետվության օգտագործումը

Այս զեկույցը բացառապես նպատակաուղղված է վերը նշված նպատակների համար.

Այս հաշվետվություն պատրաստված է բացառապես ձեր անձնական գաղտնի օգտագործման համար և միայն Պայմանագրի լիազոր մարմնին ներկայացնելու համար, համաձայն Դրամաշնորհային պայմանագրի ընդհանուր պայմանների 15-րդ հոդվածով սահմանված պահանջների: Սույն հաշվետվությունն չի կարող օգտագործվել այլ նպատակների համար և այն ենթակա չէ տարածման:

Պայմանագրի լիազոր մարմինը մեր և ձեր միջև կնքված պայմանագրի կողմը չէ և, հետևաբար, և Պայմանագրի լիազոր մարմինը կարող է ապավինել այս ծախսերի ստուգման հաշվետվությանը իր սեփական ռիսկի և հայացողության հիման վրա:

Պայմանագրի լիազոր մարմինը սույն հաշվետվությունը կարող է տրամադրել միայն այն կողմերին, որոնք ունեն կարգավորվող իրավունքներ, մասնավորապես Եվրոպական հանձնաժողովին (Ջնջել, եթե Հանձնաժողովը Պայմանագրի լիազոր մարմինն է), Խարդախությունների դեմ պայքարի Եվրոպական գրասենյակ և Աուդիտորների եվրոպական դատարան:

Այս հաշվետվությունը վերաբերում է միայն վերը նշված Ֆինանսական հաշվետվությանը և չի տարածվում ձեր ֆինանսական հաշվետվություններից որևէ մեկի վրա:

Մենք ակնկալում ենք քննարկել մեր հաշվետվությունը ձեզ հետ և ուրախ կլինենք տրամադրել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն կամ աջակցություն, որը կարող է պահանջվել:

Հարգանքով,

Աուդիտորի ստորագրություն [անձ կամ կազմակերպություն՝ համաձայն ընկերության քաղաքականության]

Ստորգրող Աուդիտորի անուն [համապատասխան անձ կամ կազմակերպություն]

Աուդիտորի հասցե [ներգրավված գրասենյակ]

Ստորագրման ամսաթիվ < ամսաթիվ > [ամսաթիվ երբ ստորագրվել է հաշվետվությունը]

1 Տեղեկատվություն դրամաշնորհային պայմանագրի վերաբերյալ

< Գլուխ 1-ը պետք է ներառի դրամաշնորհային պայմանագրի և Գործողությունների Համակարգողի/Շահառուի (ների) / առընթեր մարմնի (ների) և հիմնական ֆինանսական բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն (առավելագույնը մեկ էջ).>

2 Կատարված ընթացակարգեր և փաստացի բացահայտումներ

Մենք իրականացրել ենք դրամաշնորհային պայմանագրի հավելված 2-ում թվարկված հետևյալ հատուկ ընթացակարգերը.

1. Ընդհանուր ընթացակարգեր
2. Բյուջեով ծախսերի համապատասխանության ստուգման և վերլուծական վերանայման ընթացակարգեր
3. Ընտրված ծախսերը ստուգելու կարգ

Մենք կիրառել ենք ընտրության այն կանոնները և ստուգման ծածկույթի սկզբունքներն ու չափանիշները, որոնք նշված են Հավելված 2B- ում (բաժիններ 3-րդ և 4-րդ):

<Այստեղ բացատրեք առկա ցանկացած դժվարություններ >

Մեր կողմից հաստատված ընդհանուր ծախսերը կազմում են <xxxx> եվրո և ամփոփված են ստորև բերված աղյուսակում: Ծախսերի ծածկույթի ընդհանուր հարաբերակցությունը <xx%> է:

<Ներկայացրեք 1-ին հավելվածում ներկայացված Ֆինանսական հաշվետվության ամփոփ հաշվետվությունը, յուրաքանչյուր (ենթաբաժնի) բաժնի համար ներկայացնելով Համակարգողի կողմից տրամադրված ընդհանուր ծախսերի գումարը>:

Մենք ստուգել ենք ընտրված ծախսերը, ինչպես նշված է ամփոփաթեռնի առուսախում և

1. Ընդհանուր ընթացակարգերը

1.1 Դրամաշնորհային պայմանագրի ժամկետները և պայմանները

Մենք ծանոթացել ենք դրամաշնորհային պայմանագրի պայմաններին՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի հավելված 2Բ -ի (2-րդ բաժնում):

< Հավելված 2 Ա-ում 1.1-1.6 ընթացակարգերը, նկարագրեք փաստացի բացահայտումները և նշեք սխալները և բացառությունները: Եթե չկան փաստացի բացահայտումներ, ապա դա պետք է հստակորեն նշվի յուրաքանչյուր ընթացակարգի համար հետևյալ կերպ՝ «Այս ընթացակարգերի իրականացման ժամանակ որևէ փաստացի բացահայտումներ չեն առաջացել»:

1.2 Դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական հաշվետվություն

1.3 Հաշվապահական հաշվառման և գրանցման կանոններ

1.4 Ֆինանսական հաշվետվության համապատասխանությունը շահառուի հաշվապահական հաշվառման համակարգին

1.5 Փոխարժեքներ

1.6 Պարզեցված արժեքի տարբերակներ

2. Ընթացակարգեր ստուգելու ծախսերի համապատասխանությունը Բյուջեին և և վերլուծական վերանայում

2.1 Դրամաշնորհային պայմանագրի բյուջե

2.2 լրացումներ Դրամաշնորհային պայմանագրի բյուջեին

<նկարագրեք բոլոր բացահայտումները, որոնք առաջացել են տեխնիկական առաջադրանքի Հավելված 2 Ա-ի 3.1-3.7 ընթացակարգերի կիրառումից»:

3 Ընտրված ծախսերը ստուգելու ընթացակարգեր

Մենք ստորև ներկայացրել ենք տեխնիկական առաջադրանքի հավելված 2Ա-ի 3.1-3.7 կետերում նշված ծախսերի ճշգրտման համար ներկայացված ստուգման ընթացակարգերը և ,այսուհետ, սույն ընթացակարգերը կկիրառվեն ընտրված ծախսային հոդվածների նկատմամբ:

Մենք հաշվարկել ենք ստուգման բացառությունների գումարը և Եվրամիության ներդրման վրա հնարավոր ազդեցությունը, եթե Հանձնաժողովը հայտարարի, որ ընտրված ծախսերը իրավասու են (եթե կիրառելի են հաշվի առնելով Հանձնաժողովի ֆինանսավորման տոկոսը և անուղակի ծախսերի վրա ազդեցությունը) (օրինակ, վարչական ծախսեր և այլն): Մենք հայտնաբերել ենք բոլոր բացառությունները, ներառյալ բոլոր այն ծախսերը, որոնց համար չենք կարող հաշվարկել քանակական չափը կամ ԵՄ ներդրման վրա հնարավոր ազդեցությունը:

< Նշեք ծախսերի գումարները / հոդվածները, որոնց համար հայտնաբերվել են բացառություններ (= փաստերի և չափանիշների միջև շեղումներ) և բացառության բնույթը, ինչը նշանակում է, որ տեխնիկական առաջադրանքի II հավելվածի 2-րդ Ա-ի 3.1- 3.7 կետերում նկարագրված հստակ պայմանը (ները) հարգված չեն: Թվարկեք ստուգման բացառությունների գումարը և Եվրամիության ներդրման վրա հնարավոր ազդեցությունը, եթե Հանձնաժողովը հայտարարի, որ ծախսերն իրավասու չեն >:

3.1 Ծախսերի իրավասություն

Մենք ստուգել ենք ընտրված ծախսերը, ինչպես նշված է ամփոփաթերթի աղյուսակում, և իրականացրել ենք յուրաքանչյուր ծախսային հոդվածի հավելված 2 Ա-ի 3.1 -ում նշված ստուգման ընթացակարգերը:

<Նկարագրել փաստացի բացահայտումները և նշել սխալները և բացառությունները: Հավելված 2 Ա-ում ներկայացվող 3.1-րդ կարգ. Ծախսերի իրավունքը և համապատասխանության չափանիշները (1) - ից մինչև (9)-ը: Օրինակ՝ մենք հայտնաբերեցինք, որ Ֆինանսական հաշվետվության 3.2 ենթաբաժնում (կահույք, համակարգչային տեխնիկա) ներառված 6,500 եվրոյի ծախսային գումարը չի համապատասխանում իրականությանը: Ներկայացված 2 000 եվրո գումարն առաջացել է իրականացումից դուրս: Աջակցող ապացույցներ չկան 3 գործարքների համար, որոնց գումարը կազմում է 1.200 եվրո: 3 300 եվրոյի գրասենյակային համակարգիչների գնումների համար պահանջվող գնումների կանոնները չեն հարգվել: (Նշում. Պետք է ներկայացվեն համապատասխան մանրամասներ, ինչպիսիք են հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլն:)>

3.2 Իրավասու ուղղակի ծախսեր (Հավելված 14.2)

3.5 Բնահրային ներդրումներ (Հավելված 14.8)

3.6 Ոչ իրավասու ծախսեր (Հոդված 14.9)

3.7 Գործողությունների եկամուտներ

<<Նկարագրեք փաստացի բացահայտումները և նշեք սխալները և բացառությունները: Հավելված 2 Ա-ի 3.2-33 ընթացակարգերը: >

Հավելված 1 Դրամաշնորհային պայմանագրի ֆինանսական հաշվետվություն

< Հավելված 1-ը պետք է ներառի Դրամաշնորհային պայմանագրի շահառուի ֆինանսական հաշվետվությունը, որը ենթակա է ստուգման: Ֆինանսական հաշվետվության մեջ պետք է նշած լինի ստուգման ժամանակահատվածը: >

Հավելված 2 ծախսերի ստուգման տեխնիկական առաջադրանք

< Հավելված 2-ը պետք է ներառի սույն դրամաշնորհային պայմանագրի տեխնիկական առաջադրանքի ծախսերի ստորագրված տարբերակը ներառյալ 1-ին հավելվածը (Դրամաշնորհային պայմանագրի մասին տեղեկատվություն): >

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

Երևանի քաղաքապետարան

ք. Երևան, Արգիշտիի փ. 1

ՀՎՀՀ 02593108



ԿԱՏԱՐՈՂ

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ

ք. Երևան,

Բանկային հաշիվը՝ 2050022339351001

«Ինեկորանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 00040569

Գ. Գյուլբուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
 « _____ » « _____ » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
 արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ _____	Վճարման ժամկ ետը /ըստ վճար ման ժամ անա կացո ւյցի/ _____
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը
 և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն